

ԱՐԾԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ ՀՈՌՎԱԾԸ ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

Քննադատության կողմից մեծ գրողների ստեղծագործությունը տված առաջին գնահատականները հետագա սերունդների համար մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում: Դրանք կենդանի պատկերացում են տալիս այն մասին, թե ի՞նչ գրական-հասարակական մրթնոլորտում է ընկալվել և գնահատվել այս կամ այն նշանավոր գեղարվեստական երևույթը, ինչպե՞ս են ձևավորվել տվյալ գրողի մասին այն ըմբռնումները, որոնք հետագայում դարձել են տարածված ու սովորական: Մյուս կողմից, այդ առաջին գնահատումները անցյալի քննադատի խորաթափանցության և ճշմարտացիության անսխալ ցուցանիշն են. տարիների հեռավորությունից շատ ավելի հստակ է երևում ոչ միայն նրանց հեղինակի գրական և հասարակական դիրքորոշումը, այլև գեղարվեստական երկի էությունն ու յուրահատկությունը կոսմոսի և բացատրելու ունակության աստիճանը:

Այս առումով, կարծում ենք, գրականագետների և ընթերցող շրջանների համար անվիճելի հետաքրքրություն է ներկայացնում արևմտահայ խոշորագույն գրական-հասարակական գործիչ Արշակ Չոպանյանի հողվածը Եղիշե Չարենցի մասին: Հողվածն առաջին անգամ տպագրվել է ավելի քան կես դար առաջ՝ 1924 թվականին, Փարիզում լույս տեսնող «Ապագա» շաբաթաթերթում: Այդ թերթը, որի խմբագիրներից մեկն ինքը՝ Ա. Չոպանյանն էր, սկսեց հրատարակվել 1921 թվականից և հանդես էր գալիս իբրև նորաստեղծ Խորհրդային Հայաստանի ջերմ պաշտպան, նրա տնտեսական և մշակութային նվաճումների պրոպագանդիստ սփյուռքահայության շրջանում:

Արշակ Չոպանյանի հողվածը՝ Եղիշե Չարենցի մասին գրված առաջին և լավագույն գնահատականներից մեկն է, որը, սակայն, հանիրավի մոռացության է տրվել: Որքան մեզ հայտնի է, Չարենցին նվիրված գրականության մեջ այն չի օգտագործվել: Այնինչ, իր մի շարք կողմերով այն արժանի է լուրջ ուշադրության:

Ամենից առաջ, նշանակալից են գնահատման այն լայն շափանիշները, որոնցով համաշխարհային գրականության լավագույն գիտակ քննադատը մոտենում է այն ժամանակ դեռ երիտասարդ բանաստեղծի արժեքավորմանը: Չարենցի մեջ նա տեսնում է ոչ միայն «հայոց մեծագույն բանաստեղծներից» մեկին և «հայ հանճարի նոր հաստատումը», այլև մի արվեստագետի, որին կարելի է դասել համաշխարհային գրականության «ամենն ինքնատիպ ու բազմազան բանաստեղծների» շարքը: Չոպանյանի հողվածն ըստ ժամանակի թեքես առաջին գրական փաստաթուղթն է, ուր լիաձայն խոսվում է Չարենցի, իբրև միջազգային մասշտաբի մեծության, բանաստեղծի մասին:

Գեղագիտական հստակ սկզբունքների, խոր և նուրբ ճաշակի արգասիք են քննադատի դիտողությունները ազգային և համաշխարհային գրական ավանդույթների հետ Չարենցի ունեցած առնչությունների, նրա մի քանի երկերի գաղափարական բովանդակության, ոճական և կառուցվածքային յուրահատկությունների վերաբերյալ: Անպայման արդյունավետ է քննադատի միտքն այն մասին, որ Չարենցը սոցիալիստական հեղափոխության ընդունման և բանաստեղծական դրվատման հանգել է հայ ազգային ճակատագրի խոր վերապրման ճանապարհով, և այդ հանգամանքը նրա խոսքին տվել է մի հատուկ կորով և հուզական երանգ, համոզիչ ուժ և անկեղծություն:

Արշակ Չոպանյանի հողվածը միաժամանակ արտահայտում է հեղինակի խորապես դրական դիրքորոշումը հեղափոխության և խորհրդային երկրի հանդեպ, այն գաղափարական տեղաշարժերը, որ 20-ական թթ. սկզբին կատարվում էին սփյուռքահայության առաջադիմական շրջաններում: Հողվածն ամբողջովին տոգորված է այն փրկարար դերի գիտակցությամբ, որ խաղաց հեղափոխությունը հայ ժողովրդի կյանքում, այն պայքարի արդարացիության գիտակցությամբ, որ երգել է Չարենցն իր պոեմներում և բանաստեղծություններում:

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

I

Պր. Մակինցյան հրատարակեց վերջերս, «Խորհրդային Հայաստանի Պետ-
հրատի Պոլսո շարք»-ին մեջ, Եղիշե Զարենցի հատրճար գործերու հատոր
մը¹: Զարենցի արտակարգ տաղանդին վրա արդեն այս թերթին մեջ ուշադրու-
թյուն հրավիրեր էի «Նորք»-ի առաջին թիվին մեջ երևցած կամ հիշատակված
իր բանաստեղծություններեն մեկ քանին և «Երկիր Նաիրի» վեպին առաջին
մասը կարդալի հետո²: Անկեց ի վեր՝ ստացա Զարենցի արտադրած բոլոր բա-
նաստեղծությունները պարունակող երկու ստվար հատորները զոր հեղինակը
Մոսկվայի մեջ ի լույս ընծայած է 1922-ին³, ինչպես և իր «Կապկազ» թատե-
րական քմայքը⁴, և ատոնց ընթերցումը ոչ միայն հաստատեց առաջին տպա-
վորությունս, այլ իմ մեջս վերջնապես ամրացուց այն համոզումը, թե Զարենց
Հայոց մեծագույն բանաստեղծներեն մին է, ու մին ամենեն ինքնատիպ ու
բազմազան բանաստեղծներեն, որ որևէ ազգի մեջ երևան եկած ըլլան:

Պ. Մակինցյան իր հրատարակած հավաքածուին մեջ դրած է միայն
վերջին շրջանի արտադրությունները, ամենքն ալ ներշնչված՝ Ռուսաստանն ու
Կովկասը հեղաշրջող ու արմատական վերանորոգման մը ճամփուն մեջ դնող
պոլշևիք հեղափոխութենեն,— «Սոմա», նոր վետայական քերթված, «Ամբոխ-
ները խելագարված», երեք ռատիոպոեմ (Նաիրի Երկրից, Դեպի Ապագան,
Բրոնզե թևերը կարմիր գալիքի), «Ամենապոեմ», «Զարենց-Նամե», ինչպես և
«Կապկազ (Կովկաս) Թամաշան», ժողովրդական թատերախաղ: Այս բոլոր
ամենեն զորեղ ու անձնադրոշմ արտահայտություններն են Զարենցի, էջեր՝ ուր
ամեն ինչ, մտածում ու ձև, ստեղծագործությունն է հեղինակին, մարդկային
պատմության արտասովոր շրջանի մը ուղղակի ներգործության տակ երկնված՝
այդ մեծ շջանին հոգին արտահայտելու համար հարկ եղած ուժն ու շունչն
ունեցող քերթողի մը կողմն, որ՝ խառնվածքի հազվագյուտ բարդությամբ մը՝
Հայնեի մը քնարական սրամտությունը կը միացնե վերհարբի մը դյուցազ-
ներգական ամեհի ավյունին: Աղոր համար է, որ Պ. Մակինցյան այս հատորին
մեջ դրած է միմիայն այդ շարքը, և տեսակետով մը իրավունք ունեցած է:
Ատիկա «Զարենցի գիրքն» է. ի՛րը միայն, հայ բանաստեղծության բերած իր
նոր տարրը. բայց ուրիշ տեսակետով մը, թերևս լավագույն պիտի ըներ Պ.
Մակինցյան հատորին սկիզբը գեթ քանի մը կտոր դնելով Զարենցի նախորդ
շրջանի գրվածքներեն, ուր Սայաթ-Նովայի, Իսահակյանի ու մանավանդ Տեո-
յանի ազդեցությունը կը զգացվի, բայց ուր շատ բան արդեն իրեն հատուկ է,
ուր նույնիսկ հետևողական էջերը մերթ իր անձնական խառնվածքին որոշ
ուժեղ կնիքը կը կրեն. հոն կը գտնվին Զարենցի լավագույն կտորներեն ոմանք,
ուրիշ ոճով գրված, ավելի մոտիկ Հայոց հին ավանդական բանաստեղծության
(թեպետ արդեն իսկ հաճախ զգացնելով խոր ձգտում մը դեպի նոր ոգի մը,
նոր ներշնչում մը և նոր ձև մը), և որոնք մեծ տաղանդով լեցուն, անկորուստ

ասարու սահասսզաս ոս, լսշչսս օրինակի համար՝ Հայաստանը երգող հո-
յակապ տաղը, որ հայ բանաստեղծութեան ծաղկաքաղններուն հավիտենակուն
զարդերեն մին պիտի ըլլա.

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բուլբուլ վառման,
Ու Նաիրոյան աղջիկների հեղահեղուն պարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուշակի պես լուսապսակ նակատ չկա,
Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Կամ զմայլելի ողբերգը Վահան Տերյանի հիշատակին նվիրված.

Վահան Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո,
Թող լուս փովի հիմա իմ դեմ անլույս երեկո.
Սրտիս վրա իշնի թող մութ մի ամպի քուլա,
Քամին բերե թող մահվան բոթ և անձրևը լա:
Եվ թող թափվեն շուրջս աշնան տերևներ դեղին
Եվ զարդարեն, Վահան Տերյան, քո անցած ուղին.
Ու մըշուշում տըխուր երգով բյուրավոր զանգեր
Թող օրհներգեն թախիծը քո, իմ հեռու բնկեր:

Նկատելի է նաև, որ եթե Պ. Մակինցյանի հատորին մեջ ամփոփված Չարենցի վերջին գրվածքներու այդ շարքը ավելի ուժեղ է և բացարձակապես անձ-
նական, ավելի ալ միօրինակ է սակայն ներշնչմամբ, տարամերժորեն տիրա-
պետված ըլլալով հեղափոխական գաղափարին. նախորդ շրջանի գրվածքները
շատ ավելի այլազան են, հոն սերը, հայրենիքը, բնութիւնը, մարդկային
կյանքի եղբրական կատակերգութեան հավիտենական մոթիֆները, իրենց ար-
տահայտութունն ունին՝ ձևի մեծ պեսպիսութեամբ ու ճոխութեամբ: Չարենցի
ամբողջական անձնավորութեան վրա գաղափար ունենալու համար, անհրա-
ժեշտ է կարդալ իր գրութեանց լիակատար հավաքածուն:

Բայց եթե Չարենց նույնիսկ գրած ըլլար միայն այն էջերը որ պր. Մա-
կինցյանի հրատարակած հատորին մեջ հավաքված են, դարձյալ իրավունք
պիտի ունենար Հայոց մեծագուն բանաստեղծներու շարքին մեջ դասվելու
Այդ քերթվածներու խումբին մեջ վերականգանացած կը գտնենք, բոլորովին
ուրիշ շեշտով և տարողութեամբ, բայց նույնքան լայն ու հզոր շունչը որ Նա-
րեկացիին, Աբովյանին և Ալիշանին դործը կ'ուռնցնէ. դյուցազներգական
թռիչը Սիամանթոյին, Վարուժանին և Թումանյանին, որոնց վաղաժամ խոդ-
տակումը կ'ողբանք, այդ էջերուն մեջ նորափետուր կը թևաբախե, ուրիշ խոս-
քերով, ուրիշ պատկերներով, արտահայտում բոլորովին տարբեր, նոր շրջանի
մը, բայց որակով և զորութեամբ նույն: Նարեկացիի, Ալիշանի, Սիամանթոյի և
Վարուժանի քնարը լուրջ, բամբ ու խոր երգեր միայն հնչեցուցած է, Չարենց
ավելի խնամութուն ունի Աբովյանին և Թումանյանին հետ, որ դյուցազներգա-
կան և երգիծական կրկնակ լարերը կը միացնեն իրենց կենսախայտ փանդի-
սին վրա, այն տարբերութեամբ սակայն, որ այդ նրկուքը շատ ավելի մոտիկ են
ժողովրդական արվեստին, իրենց գործը մեծ մասամբ անոր գերագուն զար-
դացումն ու ծաղկափթթումն է. մինչ Չարենց (Սայաթ-Նովայի նմանողու-
թեամբ գրած տաղերը բացառութուն մըն են իր գործին մեջ և այն ալ՝ գրա-
հմուտի սիրուն խաղ մը), բարձր մշակույթի բանաստեղծ մըն է. արվեստագետ

քերթող մը, որ իր ամենեն արտառոց թվող նորաստեղծութիանց մեջ իսկ՝ գիտակից և հաշվված գեղեցկութիւն մը կ'իրականացնէ և որուն «ժողովրդական» գնացքով «Կապկազն» իսկ հեռու է Ֆոլքլորաշունչ բնագրական միամիտ արտադրութիւն մ'ըլլալի, այլ իր աչքո տեսած ժամանակակից քաղաքական և ընկերական դեպքերու Արիստոփանյան ճարտար և համադրված երգիծանք մը:

Ու երբ ի նկատի ունենանք, որ իր վերջին գրվածքներուն մեջ այս հասկութիւններն ի հայտ բերող Չարենցը իր նախորդ շրջանի գրութիանց մեջ ունի նաև քնարական էջեր, որ կը մոտենան Իսահակյանի և Տերյանի երգերուն գմայլելի փափկութիւնը, ոչ ոք չափազանցյալ պիտի գտնէ Չարենցին մեջ մեր ազգային քերթութիան ամենեն թանկագին դեմքերէն մին տեսնելու:

II

Չարենց պատանի մըն էր ու Տերյանի հետևողութիւնը իր քնարական առաջին փորձերը կ'ընէր՝ երբ մեծ պատերազմը պայթեցաւ: Ան Կովկասի կամավորական խումբերուն մեջ մտաւ ու գնաց կովիլ Թրքահայաստան, բայց՝ ազդեցութիւն տակ ռուս հեղափոխական շարժման, որուն կը համակրէր արդեն, և բուռն մղումովը իր իսկ խառնվածքին, ան պատերազմին մեջ մարդկային գազանութիւնը տեսաւ լոկ՝ սոսկումով ու զգվանքով, «Արևելքի քրիստոնեից պաշտպան» եվրոպական դիվանագիտութիւններուն մեջ եսամոլութիւն ու խարդախութիւն միայն նկատեց, ու տարվեցաւ այն համոզումով թե՛ Ռուսաստանի, Կովկասի, ամբողջ Արևելքի ու մանավանդ իր վտանգված ցեղին համար փրկութիւնը ռուս հեղափոխութիւն հաջողումն պետք էր ըստպասել, և դարձաւ ինքն ալ զինվոր մը՝ գործով և խոսքով՝ այդ վերանորոգչական շարժման. իր քերթվածներուն վերջին շարքը, որուն նախապատրաստութիւն մըն են նախորդ շրջանի իր բազմաձև արտադրութիւնները (ուր, սակայն, խարհափումներու, թափառումներու, երազանքներու և անձկութիւններու մեջ են՝ կը զգացվի ներքին ձգտում մը դեպի նոր կյանքի այդօրինակ հավատք մը), հստակ, հաստատ և զորեղ արտահայտութիւնն է այդ որոշ ու առնական աշխարհայացքին: Հատորը որ կը սկսի Սոմա քերթվածով, փառաբանում մաքրագործիչ ու վերանորոգիչ կրակին, ծայրե ծայր բոցավառ է հրեղեն հոգիի մը արևակերպ ջերմութիւնը ու փայլատակմամբ. այդ շարքին ամբողջ հոգեբանութիւնը կը խտանա հետևյալ կուռ հնչյակին մեջ, զոր դժբախտաբար Պ. Մակինցյան դուրս ձգած է այդ հավաքածուէն.

Որպես դաշույն՝ օրերի հրնամենի պատյանից
Ելնում է, կարծր ու բոսոր, ու վառվում է ապագան.
Եվ չի մտնի նա հրնի փոշոտ պատյանը նորից
Ու չի թաղվի օրերում, որ վառվեցին ու չըկան:

Ի՞նչ է ուզում էլ տաղտուկ հիմարութիւնը ձեր խեղճ
Եվ ձեր մեռնող աշխարհի տխրութիւնը հուսահատ.
Այն, որ օրերն ապրեցին և բանաստեղծը երգեց,
Զի խորտակվի տագնապից և սարսափից ձեր վրհատ:

Իմաստուն է օրերի վայրագ նահանջը հիմա,
Ինչպես փոշոտ պատյանի բիրտ հեռացումը սրբից—
Երբ ոսթիի հանգիպած՝ պիտի կովես ակամա:

Ու ես, պոետ իմաստուն, ահա երգում եմ նորից,
Նահանջում են օրերն ետ, հեռանում են ու չրկան—
Ու թույլում է երգս՝ նետ՝ դեպի վառվող ապագան...

Չարենց, սակայն, թեպետ հմայված ոուս հեղափոխական շարժումեն, կը մնա ամեն վայրկյան՝ իր զգայնության, մտածումին ու ձևին մեջ (ինչքան ալ այդ ձևը ձգտի դեպի նորագույն նորությունները խիզախել) խորապես հայ: Մեր ոչ մեկ բանաստեղծը ավելի խանդաղատանքով երգած է հայ հողը, հայ տառապանքը, ոչ մեկ հայ բանաստեղծ ավելի հպարտությամբ փառաբանած է հայ ցեղին հոգեկան մեծությունը և Հայության բեղմնավոր ապագային ջերմ հավատքը: Հոսանքի մը կրավորականապես հետևելու համար չէ, որ ան հարած է ոուս հեղափոխական շարժման, օտարասիրական, նորասիրական հարևանցի ձգտում մը չէ ատիկա իր մեջ, իր հայու սիրտն է այնքան, որքան իր ազատամուլ, պայքարատենչ խառնվածքը, որ զինք մղած է այդ շարժման հարելու. ու փառասիրելով ըլլալ այդ վերանորոգչական մեծ շարժման հայ երգիչը, լիովին հաջողած է ըլլալ ատիկա, և ըստ Մակինցյանի՝ ավելի հաջողած է նույն իսկ քան որևէ ոուս բանաստեղծ: «Ամբողջները խելագարված» քերթվածը, որ կը պատկերացնէ ընչազուրկ գյուղացիության ու բանվորության ամհհի արշավանքը «եսամուլ ու շահագործող քաղաքին» դեմ, ամենեն հոյակապ դուրացանքական էջերեն մին է որ գիտեմ ունէ գրականության մեջ, և զոր ունէ ճշմարիտ գեղասեր՝ ինչ ընկերական վարդապետության ալ հետևի, չի կրնար առանց սքանչացման կարդալ. անիկա ընկերական արդարության հավատքի և կովի մեծ ու անմահ քերթվածն է, ինչպես Իսահակյանի «Աբու-յալա Մահարի»-ն դառնության ու զայրույթի անմահ ու վսեմ քերթվածն է: Ատենով Պերնար Լազար⁵, անիշխանական ֆրանսացի գրագետը, նույն տեսիլը երգած էր իր քնարերգական արձակով պատմվածքներեն մեկուն մեջ, բայց ան երազանքի էջ մը, գրական քմայք մըն էր, հոս քերթվածը կը բխի ուղղակի կյանքեն, կը մխա, կը վառի իրականության ջերմությամբ ու անայլալ, անվկանդ հավատքի մըն ալ ջերմությամբը. և ի՞նչ ճոխություն պատկերներու, ի՞նչ զորություն բացատրությանց, ի՞նչ արևելական հորդություն՝ ոճին մեջ, ի՞նչ հայկական անկեղծություն և ինքնարխություն՝ զգացման ու շեշտին մեջ.

Կովում էին: Սուրում էր մի իրիկնային մարմանդ քամի.
Դեմը քաղաքն էր տարածվել՝ հազարամյա մի թշնամի,
Սֆինքսի պես հսկայական, շեկ ծրծերը դրած հողին,
Նա կտրել էր արևակամ ամբոխների կարմիր ուղին:—
Ու կայարանը հաղթանդամ իրիկնային կարմիր մուժում,
Հաղթ նստել էր նըրա առաջ որպես նըրան հսկող մի շուն,
Հաղթ նստել էր նըրա առաջ և տիրուհու կամքին գերի,
Երթն էր հսկում գետնատարած երկաթագիծ ուղիների.
Ու գծերի մոտ երկաթե, դեպի հյուսիս, դեպի առաջ՝
Ձգվել էին ալիքաձև խրամատներ գետնատարած.
Թշնամին էր պահվել նըրանց ալիքաձև գետնափորում
Ու մատներով արյունամած դեմը փոված դաշտն էր փորում,
Մտել էր ջերմ կուրծքը հողի, հողի սրտում դարան մտած,
Կրակում էր գաղտագողի, նենգ ձեռքերով արյունոտած:
Կովում էին՝ մոտենալով, մոտենալով հետըզհետե,
Պայթում էին զրընգալով հրանոթները երկաթե.
Ե՞րգ էր կարծես կոխվը այդ, որ զնգում էր մայրամուտում
Նայես՝ թըռավ մի հրանոթ ու թունդ պայթեց խրամատում...
Կովում էին, ու կովելով անցնում էին նրանք առաջ,

Ու դաշտերում իրիկնային մահն էր քրքրում համատարած,
Երգում էր նա՝ երգը խառնած թնդանոթի զրնզունին,
Անցնում էին նրանք առաջ և կրակված կովում էին,
Երգ էր սիրտը ամեն մեկի, երգ էր հայացքը կրակոտ,
Վառվում էր սիրտը ամենքի որպես կարմիր մի առավոտ,
Ե՛րգ էր կարծես արևը հին՝ իրիկնային լույսով վառված,
Եվ երգելով կովում էին ամբոխները խելագարված:

Արտակարգ գեղեցկութուններ կան «Ամենապոեմին» մեջ, որ մեծ պատերազմին պատկերացումն է՝ ըստ քերթողին որոշ աշխարհայացքին և ուս հեղափոխության տարփողումը, «Չարենց-Նամեհ»-ին մեջ, որ զմայլելի ինքնակենսագրություն մըն է, ուրեմն և՛ դարձյալ՝ ուրիշ ձևով արտահայտություն մը պատմական այդ ահավոր ու դարագլուխ կազմող երկունքի շրջանին, ինչպես և երեք շքեղ «Թաղիտ-պոեմ»-ներուն մեջ, ուր «հայ» քերթողը ընկերվարական միաստիքականության հափշտակությամբ մը թրթռուն, բայց և իր անիրավված ու զոհված ցեղին մոլեգնած ու բողոքամուտնչ սրտին թարգմանն ըլլալու գիտակցությամբ լեցուն, կ'ուղղվի հեղափոխության ոգիին և կը խոսի անոր՝ ինչպես մեծ նարեկացին «Արդարության ու Գթության աղբյուր Աստծո Տեսիլին» կը հառեր հոգեվին և անոր ուժը կը բարձրացնեն տառապյալ մարդկության հայաբարբառ քնարին աղաղակը.

Ծաղկի պես կարմիր, հրասիրտ, զվարթ,
Բացվել է այսօր սիրտս նախրյան՝
Աշխարհի սրտում,—
Թե՛ծ, կարմիր սրտում վառվող աշխարհի:
Իմ հազար անգամ ու հազար սրբով
Արնոտած, խոցված սիրտը նախրյան
Բացվել է այսօր աշխարհի սրտում,
Հուզում է հոգիս անհուն մի ինդում,
Ինդում մի հրե,
Ու երգում եմ ես, ահե՛ղ ու պայծառ
Քո էն երգը մեծ, տիեզերական,
Երկի՛ր նախրի...
Երգում եմ հիմա քո երգը էն մեծ,
Որ սրտիս տվեց տառապանքը քո,
Քո աշխատունակ, հաղթ ժողովրդի
Տառապանքը մեծ:
Ե՛ս, ե՛ս եմ նորից,
Գարեբից եկած մի անհո՛ւն պոետ,
Նախրի՛ երկիր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու զավակը մեծ.
Ոսկի երակը հնամյա ցեղիս,
Իմ ջլաբազուկ, հաղթ ժողովրդի
Օղակը վերջին,
Տվել եմ սիրտս գալիք օրերի
Երկաթե երգին,
Կապել եմ կյանքս Գալիքի հետ վառ,
Եվ կրում եմ իմ մեծ, հսկա սրտում
Մի երկաթակուռ, նո՛ր, հրզո՛ր աշխարհ:
Ու կանգնել եմ ես հզոր ու հաստատ,
Լեռների վրա քո հավերժաձյուն,
Կանգնել եմ պայծառ, ու շուրջս հիմա,
Գալիքի կարմիր թևերն են շաշում—
Եվ կարծրանում ու պնդվում է հոգիս

Նրանց շահաչում:

Ու հպարտ եմ ես, հպարտ է ու խենթ

Քո կարմիր հրով լցված իմ հողին:

Հպարտ եմ որ ես, անհուն մի պոետ,

Ձայնով խնդազին,

Խառնում եմ այս նոր, հրզոր և՛ բզբ բո—

Րուրի երգին...

Չարենց անհավասար է, իր ձևը միշտ շունի Տերյանի արտահայտչական անթերի գեղեցկությունը, բայց իր քերթողական անձնավորությունը ավելի զորեղ, ավելի ընդարձակ ու բազմաձև է քան Տերյանինը: Իր աշխարհայացքին կամ նույնիսկ գեղեցկագիտության՝ ինչ-ինչ կետերու մեջ կրնանք համամիտ չըլլալ. ատիկա ոչինչ կը պակասեցնե սքանչացումեն զոր իր գործին մեջ փայլատակող կրիտասարդ ու ճոխ տաղանդը կը սպարտադրե մեզի. ան մեծ հայ բանաստեղծն է ներկա պատմական արտասովոր ու բեղուն ռուպերին, որ ամբողջ աշխարհի համար լավագույն շրջանի մը նախապատրաստությունն է, իսկ մեր ցեղին համար՝ հայրենի հողին վրա՝ արդեն կ'ընծայե ներկա մը իրական վերածնության:

Չարենց դեռ քսանըվեց տարեկան է, այդպիսի առույզ ու ճկուն միտք մը դեռ ա՛լ ավելի լայն զարգացում, ճյուղավորում ու պտղաբերում կրնա ունենալ: Մեր պատմության ներկա շրջանին, այնքան անավոր աղետներե, ցրնցումներե ու կորուստներե հետո, այդպիսի հզոր տաղանդի մը երևումը, հրրճվանք մըն է ոչ միայն հայ գրասերին, այլև հայ ազգասերին համար. ծյուրած, արյունաքամ, սպառած ժողովուրդն մը այդպիսի բանաստեղծ մը չելլեր. մեր ժողովուրդը թիվով նվազած, հոգով ավելի քան հրբեք ուժեղ է ու բեղուն, և ատոր բազմապատիկ ապացույցները կուտա թե՛ Հայաստանի մեջ՝ ուր ամեն ձևով վերաշինության, վերականգնումի հզոր շարժում մը կ'եռա ու կ'ընդլայնի, այլև արտասահմանի Հայության մեջ, ուր ի հայտ կուգան նորանոր տաղանդներ՝ ինչպես և հայրենիքին օգնելու միահամուռ ձգտում մը: Չարենց այդ «ապացույց»-ներուն շքեղազույններեն է, և ինչ որ ամենեն ավելի հատկանշական է իր գործին մեջ, հոն տիրող առողջ, կորովի, լավատես, հավատավոր ոգին է, այնքան տարբեր Հայոց դարավոր գրականության մեջ հաճախ հայտնվող եղերերգական մեղամաղձիկ կամ վճատ հոգեբանությունն. Չարենց հայ հանճարի նոր հաստատում մըն է, ու նույն ատեն՝ բարեգուշակ նշան մը հայ ցեղի հոգեկան զորացման⁶:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

«Ազգագ», Փարիզ, քաղաքական և հասարակական շարաքերթ, 1924, № 16 (1 մարտի) և № 17 (8 մարտի):

¹ Խոսքը վերաբերում է Եղիշ Չարենցի «Պոեմներ» ժողովածուին, որը հրատարակվել է 1923 թ. Կ. Պոլսում՝ Պոզոս Մակինցյանի խմբագրությամբ և առաջաբանով (240 էջ):

² Ա. Տոպալյանն ակնարկում է «Ապագա» թերթում 1923 թ. ապրիլի 21-ին (№ 21) տպագրված իր «Հուսադիր իրերություն» հոդվածը, ուր, գրախոսելով «Նորք» հանդեսի առաջին համարը, քննադատը գրել է. «Նորքի» այդ թվին մեջ կը գտնենք մանավանդ հայտնությունը հայ նոր ու ինքնատիպ բանաստեղծի մը՝ Եղիշ Չարենցի... «Նորքի» մեջ կը գտնենք նաև Չարենցի մեկ ուժեղ բանաստեղծությունը՝ «Վերհարյան շունչով (Աշխան քամին)», ինչպես և նույն հեղինակն արտասովոր կենդանությունը՝ քմայքով ու զորությամբ լիցուն վեպի մը («Երկիր Նայիրի») Ա. մասը՝ գրված Հայնի արժանի քնարական սրամտությամբ: Չարենցի երևումը, իբր նոր աստղ հայոց գրական երկինքին մեջ, զուգադիպելով Եղիպոսի «Արև»-ին

մեջ վերջերս հրատարակված «Արյունի ճակատագրականությունը» հույակապ վեպին հեղինակուհին օր. Տորիանի բարձր ու մաքուր տաղանդին հանկարծաշող ծագմանը հետ, հառաջ եկած՝ մեր ազգին վրա խուժող, խեղդիչ, սպառիչ, քանդիչ արհավիրքներեն հետո, ամենն մխիթարական դեպքերն են ներկա բուսիս՝ մեր ցեղին անկորուստ կենսունակության և քաղաքակրթական բարձր արժեքին վրա մեր հավատքը խորապես զորացնող:

³ Խոսքը վերաբերում է Ե. Չարենցի «Երկերի ժողովածուին», Մոսկվա, 1922, հատոր 1, Բանաստեղծություններ (336 էջ), հատոր 2, էպիքական պոեմներ (282 էջ):

⁴ «Կապկազ-Յամաշան» առանձին գրքով լույս է տեսել 1923 թ. Քիֆլիսում և նույն թվականին մտել է նաև Պ. Մակինցյանի խմբագրած «Պոեմներ» ժողովածուի մեջ:

⁵ Իերնար Լազար—19-րդ դարի վերջի ֆրանսիացի հայտնի ժուռնալիստ, հեղինակ «Գլորդ և սոցիալական արվեստը», «Ճշմարտությունը Դրեյֆուսի գործի մասին» և այլ երկերի:

⁶ Չարենցի ստեղծագործությանը Ա. Չոպանյանն անդրադարձել է նաև հետագա տարիների իր ֆնանդատական ելույթներում: Օրինակ, 1926 թ. կարդացած դասախոսության մեջ նա խորհրդահայ գրողներից առանձնապես բարձր էր գնահատում Չարենցին: Միաժամանակ, նկատի ունենալով բանաստեղծի 1922—1924 թթ. որոշ երկեր, Չոպանյանը հանդիմանում էր նրան՝ «բյուպիսթական կամ ֆյուլյուրիստական արտառոցություններու մեջ իր գեղեցիկ ձիրքերը խաթարելու» համար (տե՛ս Արշակ Չոպանյան, «Մեր գրականությունը», Փարիզ, 1926, էջ 9):

Э. М. ДЖРБАШЯН — Статья Аршака Чопаняна о Егише Чаренце.— В связи с 80-летием со дня рождения Е. Чаренца публикуется статья известного западноармянского писателя и критика Аршака Чопаняна, который дает высокую оценку поэту революции. Статья Чопаняна впервые была опубликована в парижской прогрессивной армянской газете «Апага» (Будущее) в 1924 году, но была забыта и до сих пор не использовалась в исследованиях о поэте.